«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:
ԱՌԱՐԿԱ	Ֆիզիկա
ՀԵՂԻՆԱԿ	Սվետլանա Չոմոյան
ՄԱՐԶ	Երեվան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	112 ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Ուսուցչի պաշտոնի նկարագիրը 4
Մեթոդմիավորման կառուցվածքը 5
Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին 6
Եզրակացություն 8
Առաջարկություններ 8
Օգտագործված գրականություն 10

Ներածություն

Կրթական համակարգը հանդիսանում է պետականաշինության ամենակարևոր հիմնաքարերից մեկը:

Պետության հզորացման համար անհրաժեշտ է հզորացնել կրթական համակարգը, մասնավորապես դպրոցները:

Դպրոցը պետք է սովորողների մեջ ձևավորի պետական մտածողություն, արդարության և հայրենասիրության ընկալում:

Ներկա ժամանակներում մեծացել են ուսուցչին ներկայացվող պահանջները, իջել է ուսուցչի հեղինակությունը , ինչպես նաև կրթության որակն ու դասավանդման արդյունավետությունը , ուստի աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցչի աշխատանքային ծանրաբեռնվածությունը մեթոդմիավորումում , անել համամապատասխան եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել ուսուցչի դերի ու հեղինակության բարձրացման վերաբերյալ , որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը և սովորողների կարողունակությունների, արժեհամակարգի ու հմտությունների ձևավերմանը:

Ուսուցչի պաշտոնի նկարագիրը

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.

2) ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.

3) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.

4) նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.

5) սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.

6) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.

7) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

8) հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.

9) համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

11) մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.

12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

2. Հանրակրթական ուումնական հաստատության ուսուցչի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները, որոնք ընդգրկված են, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ ուսուցչի վերապատրաստման հարցաշարերում՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. առարկայական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,

դ. աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ, կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Մեթոդմիավորման կառուցվածքը

Ուսումնական հաստատություններում մեթոդմիավորումները ստեղծվում են նույն առարկայի կամ հարակից առարկաների առնվազն երեք ուսուցչի առկայությամբ:

Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

Մեթոդմիավորումում յուրաքանչյուր ուսուցչի դերը և մասնակցությունը մեթոդմիավորման աշխատանքներին շատ կարևոր է:

Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ուսուցիչները քվեարկության միջոցով ընտրում են մեթոդմիավորման նախագահ: Քննարկում և հաստատում են մեթոդմիավորման տվյալ տարվա աշխատանքային պլանը, որում ներառվում են հետևյալ աշխատանքները՝

1) ծանոթանում են տվյալ ուս. տարում մեթոդական նամակներին, ուղեցույցներին,

օրենքների փոփոխություններին և տեղեկատուների նորություններին: Նորմավորող և հրահանգավորող փաստաթղթերին.

2) կատարում են ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

3) քննարկում են դպրոցական բաղադրիչի նպատակային բաշխումը դասարաններում, որի մասին մ/մ նախագան առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

4) կատարում են նոր աշխատանքների բաշխում ուսուցիչների միջև.

5) պարտադիր վերապատրաստման մասնակցած ուսուցիչները ներկայացնում են նոր փոփոխությունները և կատարում քննարկում մ/մ անդամների հետ.

6) առաջադրում են նոր ուսումնական տարվա խնդիրները և դրանց լուծման ուղիները.

7) ուսումնասիրում են դասի արդյունավետության բարձրացման նոր մեթոդներ, կիրառում են դասարաններում և քննարկում արդյունքները .

8) ընտրում են ինքնակրթության թեմաներ, ուսումնասիրում և ներկայացնում մ/մ նիստերին.

9) կազմակերպում են փոխադարձ դասալսումներ,կատարում քննքրկումներ և առաջարկություններ անում.

10) սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպում են այցելություններ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ կամ ԲՈՒՀ-երի ներկայուցիչներ հետ հանդիպումներ դպրոցում

11) կազմակերպում են սովորողների հետ առարկայական անհատական աշխատանքներ.

12) կատարում են փորձի փոխանակում զեկույցների և բաց դասերի միջոցով.

13) կատարում են գրավոր աշխատանքների փոխադարձ ստուգումներ և արդյունքների քննարկումներ.

14) կատարում են գրավոր աշխատանքների որակի և առաջադիմության հաշվում և համեմատում նախորդ տարվա արդյունքների հետ.

15) անհատական աշխատանքներ են տանում օլիմպիական երեխաների հետ.

16) կազմակերպում և անցկացնում են առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը և կատարում արդյունքների վերլուծություն.

17) կատարում են ներքին և արտաքին ստուգումների ու քննությունների արդյունքների որակի և առաջադիմության վերլուծություններ ու քննարկումներ.

18) կատարում են աշխատանքներ երիտասարդ սկսնակ և ոչ մանկավարժական կրթությամբ ուսուցիչների հետ (դասալսում ,դասի պլանի կազմում,թեմատիկ պլանի կազմում և այլն)

19) մասնակցում են խորհրդակցություններին ու խորհրդատվություններին.

20) պատրաստում են պատի թերթեր.

21) առաջարկ են ներկայացնում նյութատեխնիկական բազայի և դիտակտիկ նյութերի ստեղծման ,հարստացման և պահպանման.

22) մասնակցում առարկայական շաբաթներին,առարկայի դրվացքի ուսումնասիրմանը և արդյունքների քննարկմանը.

23) մասնակցում են բանավեճերի,որոնողաստեղծագործական աշխատանքների և ղեկավարում նախագծային աշխատանքներ.

24) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

25) կազմակերպում են դասարանական և արտադասարանական միջոցառումներ.

26) կազմում են տարաբնույթ թեստեր.

27) կազմակերպում են միջառարկայական և ներառարկայական միջոցառումներ,բաց դասեր և դրանց քննարկումներ:

28) քննարկում են հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները .

29) կատարում եբ դասագրքերում տեղ գտած սխալների հայտնաբերում և քննարկում են մ/մ նիստում.

30) կատարում են օրվա պլանի և թեմատիկ պլանի քննարկումներ.

31) քննարկում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

32) լսում և քննարկում են մ/մ նախագահի ուստարվա հաշվետվությունը , կատարում համեմատական վերլուխություն նախորդ տարվա հետ:

Եզրակացություն

Ուսուցչի դերը ուսուցման գործընթացում առանցքային է: Նա շատ ծանրաբեռնված է աշխատանքային պարտականություններով ,որանք կատարում է դպրոցում և տանը:

Ուսուցիչը համարյա չունի ազատ ժամանակ հանգստանալու և ինքնակրթվելու համար:

Ուսուցչի աշխատաժամանակը բաղկացած է նորմավորված և չնորմավորված մասերից, ընդ որում չնորմավորված ժամանակահատվածում ուսուցիչը կատարում է ավելի մեծ աշխատանք, քան նորմավորված մասում:

Անհրաժեշտ է բարձրացնել ուսուցչի հեղինակությունը և պայմաններ ստեղծել լիարժեք հանգստանալու և ինքնակրթվելու հաշմար:

Ներկա ժամանակներում ուսուցիչը պետք է բազմակողմանի և նորարարական մեթոդներով աշխատի սովորողի մոտ արժեհամակարգ, գիտելիք, վերաբերմունք և կարողունակություն ձևավորելու համար:

Ուսուցիչը պետք է ֆինանսապես ապահովված լինի ,որպեսզի գումար վաստակելու համար լրացուցիչ այլ աշխատանք կատարելու անհրաժեշտություն չունենա և իր ողջ ազատ ժամանակը տրամադրի ինքնակրթվելուն, հանգստանալուն և իր ընտանիքին:

Առաջարկություն

Ուսուցչից չպահանջել ավելորդ գրագրություն: Թեմատիկ պլաններում անհրաժեշտության դեպքում ինքնուրույն փոփոխություն կատարելու իրավունք տալ:

Բարձրացնել ուսուցիչների հենքային աշխատավարձը այնքան, որ նա չձգտի հավելյալ այլ աշխատանքի գումար վաստակելու համար, հետո նոր բարձրացնել կամավոր ատեստավորման արդյունքներով:

Չհրապարակել կամավոր ատեստավորման արդյունքները: Արդյունքների ցածր լինելու դեպքում ուսուցչին չազատել աշխատանքից այլ տալ հնարավորություն անընդհատ

պատրաստվելու և աշխատավարձի բարձրացման համար կամավոր ատեստավորման դիմելու:

Դրույքաչափը դարձնել 18 ժամ:

Եթե ուսուցիչը ավարտել է օրվա աշխատանքները նրան չստիպել հավելյալ մնալ դպրոցում, որովհետև կան շատ աշխատանքներ, որոնք նա կատարում է տանը համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությամբ: Հաշվի առնել, որ ուսուցիչը կատարում է ծանր մտավոր և հոգեբանական աշխատանք, նրան լիարժեք հանգստանալու հնարավորություն տալ:

Ուսման որակը բարձրացնելու համար կրճատել սովորողների քանակը, դասարաններում թողնելով առավելագույնը 15-20 սավորող:

Բնագիտական առարկաների դասերին յուրաքանչյուչ սովորողի ապահովել փորձասարքերով և դիդակտիկ նյութերով:

Սովորողներին գնահատել ոչ միայն մնացորդային գիտելիքի այլ մտածելու, տրամաբանելու և տվյալ իրավիճակում ճիշտ լուծումներ առաջարկելու համար:

Դասերը կազմակերպել յուրաքանչյուր առարկայի համար կահավորված մասնագիտական, առարկայական դասասենյակում կամ դասասենյակներում:

Հիմնական դպրոցը ավարտելուց հետո միջնակարգ կրթությունը պարտադիր չդարձնել: Պահպանելով երեխայի կրթական իրավունքը նրան չպարտադրել, այլ կրթությունը շարունակելու կամ չշարունակելու ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն տալ:

սԲՈՒՀ-երի ընդունելության մրցույթում հաշվի առնել նաև ատեստատի միջին գնահատականը :

Օգտագործված գրականություն

1. Կրթության կասին օրենք
2. Հանրակրթության մասին օրենք
3. ԿԶՆԱԿ -ի կայք
4. Պաշարների շտեմարան
5. Համացանց